«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՊՁԲ-2020/16-11-ԵՊԲՀ-1

ք. Երևան << >> << >> 2020 թ

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր **Ա. Մուրադյանի**, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն**, ի դեմս տնօրեն **Բ.Թադևոսյանի**, որը գործում ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10_ օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 14289800 (տասնչորս միլիոն երկու հարյուր ութսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող թիվ **10, 12, 13, 15, 16, 17, 19, 20, 22** չափաբաժիննով նախատեսված ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365** օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի

համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Գնորդի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 20 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<<ԳՆՈՐԴ>>	**<<ՎԱՃԱՌՈՂ>>**
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ	**<<Կոնցեռն Էներգոմաշ>> ՓԲԸ**
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	**Հասցե՝ ք. Երևան, Ազատության 26/8**
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	**Բանկ՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ**
h/h 11500166513800	**h/h 217002182558001**
ՀՎՀՀ 01503448	**ՀՎՀՀ 01210095**
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	**Էլ.Փոստ՝ lawyer@c-e.am**
	Հեռ.՝ +374(10)209777, +374(10)209775
	Տնօրեն՝ Բ.Թադևոսյան
(ստորագրությունը)	**(ստորագրությունը)**
Կ.Տ	**Կ.Տ**

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.03.31 17:23:36 AMST

BATIKYAN ARMINE 6103840430

Digitally signed by BATIKYAN ARMINE 6103840430
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••••, serialNumber=2e62ab58b3e5, cn=BATIKYAN ARMINE 6103840430
Date: 2020.03.31 15:55:30 +04'00'

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-2020/16-11-ԵՊԲՀ-1
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	33141211	Cobas Integra 400+ Ասեղների հավաքածու Կոբաս ինտեգրա անալիզատորի համար	Cobas Integra 400+ Ասեղների հավաքածու Կոբաս ինտեգրա անալիզատորի համար Probe Set cobas 400 Probe Set cobas 400 Roche Diagnostics	Cobas Integra 400+ ասեղների հավաքածու Կոբաս ինտեգրա անալիզատորի համար /Probe Set cobas 400/: Օրիգինալ: Կոբաս ինտեգրա անալիզատորի համար: Ֆորմատ՝ տուփում 2 հատ ասեղ իրենց խողովակներով/հատ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները 15-25 ջերմաստիճան: For In Vitro Diagnostic only: Եթե առկա է պիտանիության ժամկետ, ապա հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:	հատ	155500 0	155000	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	

2	33141211	Էլեկսիս թափման արկղ	Էլեկսիս թափման արկղ Elecsys clean liner Elecsys clean liner Roche Diagnostics	Էլեկսիս կլին լայներ (Elecsys clean liner): Օրիգինալ: Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ էլեկտրոխեմիլումինես ցենտային անալիզ: Ֆորմատ՝ 14 հատ թափման արկղ տուփում/հատ: Նոր,չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: For In Vitro Diagnostic only:	հատ	23290	69870	3	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	3	
3	33141211	Ռեակցիոն կյուվետների հավաքածու	Ռեակցիոն կյուվետների հավաքածու Cell set for c311 Cell set for c311 Roche Diagnostics	Ռեակցիոն կյուվետներ կոբաս c311 սարքի համար: Օրիգինալ: Ֆորմատ՝ 3x6 սեգմենտ/հատ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճան: Եթե առկա է պիտանիության ժամկետ, ապա հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:	հատ	620930	620930	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	
4	33141211	Cobas c311 անալիզատորի համար ազդանյութի ասեղ	Cobas c311 անալիզատորի համար ազդանյութի ասեղ	ԿոբասU311 անալիզատորների համար ազդանյութի ասեղ՝ Probe Reagent Assy c311: Օրիգինալ: Ֆորմատ՝ 1 հատ ասեղ: Նոր,	հատ	265000	265000	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ	1	

			Probe Reagent Assy c311 Probe Reagent Assy c311 Roche Diagnostics	չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճան: Եթե առկա է պիտանիության ժամկետ, ապա հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:					Մուրացան 114		
10	33111490	Cobos e411 իմունոլոգիական վերլուծիչի համար նախատեսված փորձանոթների տեղափոխման համակարգ	Cobos e411 իմունոլոգիական վերլուծիչի համար նախատեսված փորձանոթների տեղափոխման համակարգ Gripper Assy Gripper Assy Roche Diagnostics	Roche Diagnostics Cobos e411 իմունոլոգիական վերլուծիչի համար նախատեսված փորձանոթների տեղափոխման համակարգ, որը պետք է լինի հավաքված վիճակում և ներառի շարժիչ, շարժիչի ամրակալները և միացման մալուխները տվիչներով: Տեղադրումը և մեխանիկական կարգաբերումները իրականացվում են Cobos e411 իմունոլոգիական վերլուծիչն արտադրող ընկերության որակավորված մասնագետի կողմից: Մասնագետի գործող սերտիֆիկատի առկայություն: Նոր, չօգտագործված: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 12 ամսից ոչ պակաս:	հատ	1200000	1200000	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	

11	33111490	Կոբաս U311 անալիզատորի հալոգեն լամպ	Կոբաս U311 անալիզատորի հալոգեն լամպ Halogen lamp 12V/50W Halogen lamp 12V/50W Roche Diagnostics	Կոբաս U311 անալիզատորի համար հալոգեն լամպ՝ 12վ 50 Վտ: Օրիգինալ: Ֆորմատ՝ 1 հատ լամպ տուփում: Նոր, չօգտագործված: Պահպանման պայմանները սենյակային ջերմաստիճանում:	հատ	217000	1736000	8	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	8	
12	33111490	Կոբաս b 121-ի սպասարկան հավաքածու	Կոբաս b 121-ի սպասարկան հավաքածու Kit maintenance cobas b 121 Kit maintenance cobas b 121 Roche Diagnostics	Cobas b121 արյան գազերի վերլուծիչի համար նախատեսված խնամքի հավաքածու (Kit maintenance cobas b 121) մեկ տարվա համար: Օրիգինալ: Պետք է ներառի՝ pump tube, needle sealing, fill port, pump head, MC tubing set, tubing set - յուրաքանչյուրից 1 հատ: Ֆորմատ՝ հատ: Նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 12 ամսից ոչ պակաս:	հատ	388000	776000	2	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	2	
13	33111490	Տերմալ տպիչ	Տերմալ տպիչ Thermic Printer Thermic Printer Diagnostica Stago	Stago ընկերության Start 4 անալիզատորի համար նախատեսված տերմալ տպիչ (Thermic Printer): Օրիգինալ: Ֆորմատ՝ հատ: Մեթոդ՝ մակարդելիության ժամանակի որոշումը ըստ վիսկոսիմետրիկ չափման տեխնոլոգիայի: Նոր, չօգտագործված: Երաշխիքային	հատ	357500	715000	2	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	2	

				ժամկետը՝ տեղադրման պահից 12 ամսից ոչ պակաս:							
14	33111490	Cobas lntegra սարքի հալոգեն լամպ	Cobas lntegra սարքի հալոգեն լամպ Halogen lamp 12V/100W Halogen lamp 12V/100W Roche Diagnostics	Cobas lntegra սարքի համար նախատեսված չափիչ հալոգեն լամպ 12V/100W Assy: Օրիգինալ: Ֆորմատ՝ հատ: Նոր, չօգտագործված: Պահպանման պայմանները՝սենյակային ջերմաստիճանում:	հատ	66000	66000	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	
15	33111490	Կոբաս U311 անալիզատորների խնամքի հավաքածու 1 տարվա համար	Կոբաս U311 անալիզատորների խնամքի հավաքածու 1 տարվա համար KIT Maintenance 1 YEAR COBAS C311 KIT Maintenance 1 YEAR COBAS C311 Roche Diagnostics	Կոբաս U311 անալիզատորների խնամքի հավաքածու 1 տարվա համար: Օրիգինալ: Պետք է ներառի՝ SIPPER NOZZLE, FILTER, HEAT CUT FILTER, NOZZLE TIP, COVER USM CELL - 1 հատ յուրաքանչյուրից: Ֆորմատ՝ հատ: Նոր, չօգտագործված: Պահպանման պայմանները 15-25 ջերմաստիճանում: Երաշխիքային ժամկետը՝ տեղադրման պահից 12 ամսից ոչ պակաս:	հատ	660000	660000	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	
16	33111490	Կոբաս E411 անալիզատորների խնամքի հավաքածու 1 տարվա համար	Կոբաս E411 անալիզատորների խնամքի հավաքածու 1 տարվա համար KIT Maintenance 1 YEAR E411	Կոբաս e411 անալիզատորների խնամքի հավաքածու 1 տարվա համար: Պետք է ներառի՝ SERVICE KIT H 1 հատ, SERVICE KIT Y 1 հատ, Cell Check 2 հատ, , Blank cell 2 հատ, SAP 1 հատ, Measuring Cell -1 հատ: Օրիգինալ: Ֆորմատ՝ հատ: Նոր, չօգտագործված:	հատ	1619000	3238000	2	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	2	

			KIT Maintenance 1 YEAR COBAS E411 Roche Diagnostics	Պահպանման պայմանները 15-25 ջերմաստիճան: Երաշխիքային ժամկետը՝ տեղադրման պահից 12 ամսից ոչ պակաս:							
17	33111490	Սիսմեքս sysmex անալիզատորի խնամքի հավաքածու 1 տարվա համար	Սիսմեքս sysmex անալիզատորի խնամքի հավաքածու 1 տարվա համար Sysmex KIT Maintenance 1 YEAR Sysmex KIT Maintenance 1 YEAR Sysmex	PMIKIT XT SERIES, XT-4000i հեմատոլոգիական վերլուծիչի համար նախատեսված խնամքի հավաքածու մեկ տարվա համար: Օրիգինալ: Պետք է ներառի՝ SCS-1000, TUBING NO.110, TUBE PHARMED BPT 1/32IN X 5/32IN, TUBE PHARMED BPT_1/4IN X 1/8IN, TUBE PHARMED BPT_1/4IN X 1/8IN, RUBBER PLATE NO.39, O-RING IN-11.2, SEAL TEFLON AR401-P9-XC, HAND CLIPPER NO.17-1 և PMIKIT PU-15 3Y - 1 հատ յուրաքանչյուրից: Ֆորմատ՝ հատ: Նոր, չօգտագործված: Երաշխիքային ժամկետը՝ տեղադրման պահից 12 ամսից ոչ պակաս:	հատ	980000	980000	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	
18	33111490	Cobas b121 արյան գազերի վերլուծիչի համար նախատեսված պոմպի խողովակ	Cobas b121 արյան գազերի վերլուծիչի համար նախատեսված պոմպի խողովակ	Cobas b121 արյան գազերի վերլուծիչի համար նախատեսված պոմպի խողովակ: Օրիգինալ: Ֆորմատ՝ հատ: Նոր, չօգտագործված: Եթե	հատ	20000	40000	2	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	2	

			Coba b121 Pump tube Coba b121 Pump tube Roche Diagnostics	առկա է պիտանիության ժամկետ, ապա հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն:							
19	33111490	Cobas e 411 կյուվետների տեղափոխման համակարգի մալուխ	Cobas e 411 կյուվետների տեղափոխմն համակարգի մալուխ FPC Cable(C21)ASSYFPC Cable(C21) ASSY RocheDiagnostics	Cobas e 411 կյուվետների տեղափոխման համակարգի մալուխ /շլեյֆ/- FPC Cable(C21)ASSY: Օրիգինալ: Ֆորմատ՝ հատ: Նոր, չօգտագործված: Երաշխիքային ժամկետը՝ տեղադրման պահից 12 ամսից ոչ պակաս:	հատ	48000	48000	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	
20	33111490	XN-350 սարքի օդի պոմպ	XN-350 սարքի օդի պոմպ Air pump Air pump Sysmex	XN-350 սարքի օդի պոմպ /AIR PUMP for XN-350/: Օրիգինալ: Նոր, չօգտագործված: Ֆորմատ՝ հատ: Երաշխիքային ժամկետը՝ տեղադրման պահից 12 ամսից ոչ պակաս:	հատ	240000	240000	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	
22	33111490	Cobas Integra 400 Plus խնամքի հավաքածու մեկ տարվա	Cobas Integra 400 Plus խնամքի հավաքածու մեկ տարվա KIT Maintenance 1 YEAR cobas integra 400 plus KIT Maintenance 1 YEAR cobas integra 400	Cobas Integra 400 Plus սարքի խնամքի հավաքածու մեկ տարվա համար: Օրիգինալ: Պետք է ներառի՝ Filter Ligacon, Filter Water Sterapore-H, Seal Inlet Filter, D7/11.5x4, Seal Cap Pipette, Seal Bal D9/12x2.5, Seal Teflon 250uL, Seal Quad Ring, Spring Washers - 1 հատ	հատ	280000	280000	1	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	1	

			plus Roche Diagnostic	յուրաքանչյուրից: Ֆորմատ՝ հատ: Նոր, չօգտագործված: Երաշխիքային ժամկետը՝ տեղադրման պահից 12 ամսից ոչ պակաս:							
64	33111490	Նորածնային հոսքային տվիչ նախատեսված Hamilton արհեստական շնչառության սարքերի համար	Նորածնային հոսքային տվիչ նախատեսված Hamilton արհեստական շնչառության սարքերի համար FLOW SENSOR, INFANT FLOW SENSOR Hamilton Medical	Միանվագ օգտագործման հոսքային տվիչ, նախատեսված Hamilton C1 և Galileo արհեստական շնչառության սարքերի համար (FLOW SENSOR, INFANT): Օրիգինալ: նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն1/2-ի առկայություն:	հատ	28000	1400000	50	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	50	
71	33141211	Նորածնային արհեստական շնչառության սարքի կոնտուր	Նորածնային արհեստական շնչառության սարքի կոնտուր Single-use breathing tube breathing tube Fritz Stephan GmbH	Միանվագ երկգծանի նորածնային արհեստական շնչառության սարքի կոնտուր նախատեսված և լիովին համատեղելի <<Stephan Sophie>> արհեստական սարքի ներկառուցված խոնավացուցիչի համար: Ներառում է նաև Y-ձև կցիչ, ճնշման չափման պորտ և տարբեր կցիչների հավաքածու: Օրիգինալ: Ֆորմատ- հատ: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին ամբողջ	հատ	45000	1800000	40	ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114	40	

				պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-րդի առկայություն: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի/ների առկայություն:							

** Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:*

**** Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.03.31 17:24:10 AMST

<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<Կոնցեռն Էներգոմաշ>> ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Ազատության 26/8
Բանկ՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
h/h 217002182558001
ՀՎՀՀ 01210095
Էլ.Փոստ՝ lawyer@c-e.am
Հեռ.՝ +374(10)209777, +374(10)209775
Տնօրեն՝ Բ.Թադևոսյան

(ստորագրությունը)
Կ.Տ

BATIKYAN ARMINE 6103840430

Digitally signed by BATIKYAN ARMINE 6103840430
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••••, serialNumber=2e62ab58b3e5, cn=BATIKYAN ARMINE 6103840430
Date: 2020.03.31 15:55:54 +04'00'

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-2020/16-11-ԵՊԲՀ-1
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	33141211	Cobas Integra 400+ Ասեղների հավաքածու Կոբաս ինտեգրա անալիզատորի համար	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
2	33141211	Էլեկսիս թափման արկղ	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
3	33141211	Ռեակցիոն կյուվետների հավաքածու	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
4	33141211	Cobas c311 անալիզատորի համար ազդանյութի ասեղ	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
10	33111490	Cobos e411 իմունոլոգիական վերլուծիչի համար նախատեսված փորձանոթների տեղափոխման համակարգ	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

11	33111490	Կոբաս U311 անալիզատորի հալոգեն լամպ	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
12	33111490	Կոբաս b 121-ի սպասարկան հավաքածու	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
13	33111490	Տերմալ տպիչ	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
14	33111490	Cobas lntegra սարքի հալոգեն լամպ	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
15	33111490	Կոբաս U311 անալիզատորների խնամքի հավաքածու 1 տարվա համար	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
16	33111490	Կոբաս E411 անալիզատորների խնամքի հավաքածու 1 տարվա համար	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
17	33111490	Սիսմեքս sysmex անալիզատորի խնամքի հավաքածու 1 տարվա համար	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
18	33111490	Cobas b121 արյան գազերի վերլուծիչի համար նախատեսված պոմպի խողովակ	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
19	33111490	Cobas e 411 կյուվետների տեղափոխման համակարգի մալուխ	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
20	33111490	XN-350 սարքի օդի պոմպ	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
22	33111490	Cobas Integra 400 Plus խնամքի հավաքածու մեկ տարվա	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
64	33111490	Նորածնային հոսքային տվիչ նախատեսված Hamilton արհեստական շնչառության սարքերի համար	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

71	33141211	Նորածնային արհեստական շնչառության սարքի կոնտուր	-	-	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ ըստ փաստացի մատակարարված պմբաքանակի:*

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ,
Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.03.31 17:24:48 AMST

<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<Կոնցեռն Էներգոմաշ>> ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Ազատության 26/8
Բանկ՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
h/h 217002182558001
ՀՎՀՀ 01210095
Էլ.Փոստ՝ lawyer@c-e.am
Հեռ.՝ +374(10)209777, +374(10)209775
Տնօրեն՝ Բ.Թադևոսյան

(ստորագրությունը)
Կ.Տ

BATIKYAN ARMINE 6103840430

Digitally signed by BATIKYAN ARMINE 6103840430
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••••, serialNumber=2e62ab58b3e5, cn=BATIKYAN ARMINE 6103840430
Date: 2020.03.31 15:57:14 +04'00'

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն